Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/10 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի նստավայրի նոր վարչական շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

29.06.2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջռիրաբյան

Անդամներ՝ Ն. Ղազարյան
Հ. Մնացականյան
Էդ. Առուստամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Հյուսիսյանը

## 1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին

(Ա. Ջռիրաբյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ պաշտպանության նախարարություններից գրություններ չեն ստացվել, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ ԿԳՄՍ, ՀՀ առողջապահության նախարարություններից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեից, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից ստացված պատասխան գրությունների արդյունքներով հրավերով սահմանված հավելված N1.2-ի և հավելված N1.3-ի պահանջներին չհամապատասխանող հայտեր առկա չեն:

1.2 Գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ և «Նավասարդ Շինարար» ՍՊԸ կոնսորցիումի, «ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին, իսկ «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

## «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ

- Ըստ հրավերի պահանջի՝ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նմանատիպ (արդյունաբերական և քաղաքացիական նշանակության բարձր ռիսկայնության աստիճանի (4-րդ կատեգորիա) դասակարգում ունեցող օբյեկտների կառուցման կամ վերակառուցման) առնվազն երկու պայմանագրերի պատճենները, նաև այդ պայմանագրերի (համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ավարտական ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, որոնք մասնակիցը հայտով չի ներկայացրել:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 30.06.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումը ներկայացնելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/10 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Ձուիրաբյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 01.07.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------------------ Ա. Ձուիրաբյան

Անդամներ՝ ------------------------------------------ Ն. Ղազարյան

------------------------------------------ Հ. Մնացականյան

------------------------------------------ Էդ. Առուստամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------------ Ա. Մանուչարյան